



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 դեկտեմբերի 2014 թվականի N 444-Ա

**<<ՔԱՂՍԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2014-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.17-րդ կետի <<ա>> ենթակետի, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումը և 2014 թվականի հոկտեմբերի 27-ի N 25 աշխատանքային պայմանագրի 3.8 կետը՝ որոշում եմ.

1. Հաստատել՝ <<Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 2014-2019 թվականների գործունեության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝ ապահովել ընկերության 2014-2019 թվականների գործունեության ծրագրի կատարման վերաբերյալ ընկերության տնօրենի կողմից համապատասխան հաշվետվության ներկայացումը մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2014 թվականի դեկտեմբերի 25
ք. Հրազդան



Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 444-Ա ՈՐՈՇՄԱՆ



2014-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ
<<ՔԱՂՍԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. «Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), շահույթ ստանալու նպատակով հիմնադրված, առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է: Ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N1911-Ն և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2007 թվականի մարտի 19-ի N30 որոշումների համաձայն Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի «Հրազդանի պոլիկլինիկա» (գրանցման համար՝ 222.120.00016 , պետական գրանցման վկայական՝ 03 Ա 051395) փակ բաժնետիրական ընկերության առանձնացման ձևով՝ վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը բաժանիչ հաշվեկշիռն համապատասխան:

Ընկերության պետական գրանցումն իրականացվել է 2007 թվականի օգոստոսի 28-ին:

Գրանցման վկայականի համարն է 03 Ա 077847, գրանցման թիվը՝ 222.120.00788:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի:


Ընկերության կանոնադրական կապիտալը 105000 (հարյուր հինգ հազար) դրամ է, որը կազմում է 21 հատ սովորական անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 5000 (հինգ հազար) դրամ է: Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ են, 21 բաժնետոմսն էլ տեղարաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից (100% պետական մասնակցություն):

Ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականում նշված անշարժ գույքի մակերեսը 132.495 քառ.մետր է:

Ընկերությանը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից 2010 թվականի դեկտեմբերի 30-ին տրվել է անժամկետ բժշկական օգնության և սպասարկման արտահիվանդանոցային ձևի «Ընտանեկան բժշկություն» տեսակի լիցենզիա՝ Կ-XX-001501:

Ընկերությունում գործում է ընտանեկան բժշկի ծառայություն:

2. Ընկերության կառուցվածքը.



Ընկերությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

1. վարչական

ա. տնօրեն

բ. հաշվապահ

2. բուժական

ա. բժշկական անձնակազմ

բ. միջին բուժանձնակազմ

գ. կրտսեր բուժանձնակազմ

3. Ընկերության կադրային հագեցվածությունը.

1) տնօրեն և ընտանեկան բժիշկ՝ 1 անձ

2) հաշվապահ՝ 1 անձ

3) ընտանեկան բուժքույր՝ 2 անձ

4) մայրապետ՝ 1 անձ

Ընկերությունում թափուր հաստիքներ չկան:

Նախատեսվում է առաջիկա տարիներին բարձրացնել անձնակազմի մասնագիտական պատրաստվածության աստիճանը շարունակական վերապատրաստումների միջոցով:

II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընկերությունը իրականացնում է թվով 2222 բնակչի բժշկական օգնություն և սպասարկում, որից՝ 491-ը 0-18 տարեկան, 1731-ը՝ 18 տարեկանից մեծ (առ 30.09.2014թ.):

Վերջին կրեք տարիների և 2014թ. ինն ամիսների ընթացքում ընտանեկան բժշկին հաճախումների թիվը ներկայացված է հետևյալ աղյուսակում.

Տարեթիվ	Հաճախումների քանակ	Որից՝ հիվանդության պատճառով
2011	5021	1108
2012	5600	991
2013	5847	679
2014 /9 ամիս/	3912	795

Հաճախումները 2012թ.-ին 2011թ.-ի նկատմամբ աճել են 11.5 %-ով, 2013թ.-ին 2012թ.-ի նկատմամբ՝ 4%-ով:

Վերջին տարիներին ծնված երեխաների քանակն ըստ տարիների՝ ներկայացված է աղյուսակում.

	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ. /9 ամիս/
Նորածինների թիվ	30	38	35	34

4. Մանկական ազգաբնակչության շրջանում կատարվում են թերսնուցման, սակավարյունության, տևտղական խնդիրների, լսողության խանգարումների, ողնաշարի ծովածույթան վաղ հայտարերման հետազոտություններ (սկրինինգ): Կատարվում է նորածինների սկրինինգ, մեծ ուշադրություն է դարձվում կրծքով սնուցման ապահովմանը:

5. Կատարվում են կանխարգելիչ պատվաստումներ, ինչի արդյունքում վերջին հինգ տարիների ընթացքում ընկերության կողմից սպասարկվող երեխաների շրջանում չեն եղել իմունականխարգելման ազգային ծրագրում ընդգրկված հիվանդություններով հիվանդանալու դեպքեր:

Պատվաստումներում ընդգրկվածությունը 2014 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին վերկայացված է աղյուսակում.

2 տ (23 ամսական 29 օրական) երեխաների թիվ	Նրանցից պատվաստումներում ամբողջական ընդգրկված	%	աղ թվում՝		
			ԿԿԽՍ1	ԱԿԴՓ	ՕԴՎ4
27	25	93	93	93	93

I տ (II ամսական 29 օրական) երեխաների թիվ	Նրանցից պատվաստումներում ամրոդջական ընդգրկված	%	այդ թվում /%/'				
			ԲՑԺ	Հեպ Բ	Պենտա3	Ռոտա2	ՕՊՎ3
30	28	93	100	100	93	93	97

7 տ (6 տարեկան II ամսական 29 օրական) երեխաների թիվ	Նրանցից պատվաստումներում ամրոդջական ընդգրկված	%	այդ թվում		
			ԱԴՓ-Մ	ՕՊՎ5	ԿԿԽ2
27	26	96	96	96	96

Նախատեսվում է առաջիկա տարիներին ավելի բարձրացնել պատվաստումներում ընդգրկվածության տոկոսը՝ ազգաբնակչության կրթման, սերնդի առողջության պահպանման հանդեպ պատասխանատվության բարձրացման միջոցով:

6. Սպառարկվող ազգաբնակչության շրջանում առավել հաճախ հանդիպող հիվանդություններով հիվանդացության պատկերն ըստ խմբերի տարեկան կտրվածքով ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Հիվանդությունների խումբ	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ. /9 ամիս/
Շնչառական օրգանների հիվանդություններ	217	183	167	118
Վարակիչ և մակարածական հիվանդություններ	135	112	62	28
Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ	121	122	73	80
Ոսկրամկանային համակարգի և շարակցական հյուսվածքի հիվանդություններ	86	63	49	33
Միզասեռական համակարգի հիվանդություններ	85	88	55	50

7. Ակնհայտ է հիվանդացության նվազման միտումը: Սա կարող է լինել ինչպես սկրինինգային ծրագրերում ազգաբնակչության գրեթե լրիվ ընդգրկվածության, այնպես էլ բնկերության կանխարգելիչ գործունեության (սկրինինգ, բարոզություն, առողջ ապրելակերպի ուսուցում) արդյունք: 2014 թվականի առաջին 9 ամիսների ցուցանիշները վկայում են առողջապահական ծրագրերում ազգաբնակչության ընդգրկվածության հարցում առաջընթացի մասին:

8. Եթե շնչառական համակարգի հիվանդությունները հիմնականում տարափոխիկ են և սեզոնային բնույթ ունեն , ապա մակարածական հիվանդությունների տարածումը կապված է ոչ

միայն հիգիենայի կանոնների խախտումների, այլև Քաղսի գյուղի ջրամատակարարման խնդիրների հետ: Այժմ. թե՛ բուժկանխարգելիչ աշխատանքների, սանիտաշխատանքի, թե՛ ջրամատակարարման որակի բարելավման արդյունքում՝ մակաբուժակրությունը նվազել է:

9. Արյան շրջանառության համակարգի հիվանդությունների վաղ հայտնաբերման նպատակով կատարվում է արյան զարկերակային ճնշման և արյան մեջ խոլեստերինի պարունակության սկրինինգ: Շաբաթային դիաբետի վաղ հայտնաբերման նպատակով կատարվում է արյան մեջ գլյուկոզայի մակարդակի սկրինինգ: Կրծքագեղձի քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով կատարվում է կրծքագեղձի գնման սկրինինգ և ինքնագնման ուսուցում: Կատարվում է մարմնի զանգվածի ցուցանիշի որոշման սկրինինգ: 2014-2019 թ.թ. նախատեսվում է ընդլայնել վերոհիշյալ սկրինինգային ծրագրերում ընգրկված ազգաբնակչության շրջանակը: Ինչպես նաև համապատասխան պետական ծրագրի շրջանակներում արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման նպատակով նախատեսվում է 2015թ.-ից ՊԱՊ բսուկի սկրինինգում ընդգրկվածությունը հասցնել տարեկան միջինը 20%:

10. Կատարվում է նաև սիրտ-անոթային հիվանդություններով հիվանդների արյան մեջ խոլեստերինի պարունակության և էլեկտրասրտագրության մոնիտորինգ, շաբաթային դիաբետով հիվանդների արյան մեջ և մեզում գլյուկոզայի պարունակության, ակնափառակի վիճակի, բարձր զարկերակային ճնշմամբ հիվանդների զարկերակային ճնշման մոնիտորինգ:

11. Ընկերությունում յուրջ ուշադրություն է դարձվում շագանակագեղձի խնդիրների վաղ հայտնաբերմանը և շագանակագեղձի քաղցկեղի կանխարգելմանը՝ կրթման, հիվանդության վաղ հայտնաբերման, համապատասխան խորհրդատվության տրամադրման և բուժման միջոցով:

12. Ընկերությունում կարևորվում է հիվանդությունների կանխարգելումը՝ առողջ ապրելակերպի ուսուցման և ծխելու վնասակարության, հիգիենայի կանոնների պահպանման անհրաժեշտության, վերարտադրողական առողջության վերաբերյալ խորհրդատվության միջոցով: Առաջիկա տարիներին նախատեսվում է խնդիրների ծագման դեպքում բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով վաղ դիմելու անհրաժեշտության ավելի լայն բարոցության իրականացում:

13. Ընկերությունը պայմանագրային հիմունքներով համագործակցում է «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հետ՝ ուղեգրելով այցելուներին լաբարատոր-ախտորոշիչ հետազոտությունների և նեղ մասնագետների խորհրդատվության: Ուղեգրումների բանակական պատկերը ըստ տարիներին ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Ուղեգրում	Տարի	2011թ. հազ.դրամ	2012թ. հազ.դրամ	2013թ. հազ.դրամ	2014թ. /9 ամիս/ հազ.դրամ
Նեղ մասնագետներին		199.5	240.05	282.25	174.8
Լաբորատոր-ախտորոշիչ		585.0	644.67	685.50	630.7

Նախատեսվում է 2015թ.-ից հնարավորություն ստեղծել «Քաղաքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում կատարելու ՊԱՊ բսուկի վերցնում և գլուկոմետրիա, ինչը մեծապես կնպաստի արգանդի պարանոցի բաղցկեղի և շաքարային դիաբետի վաղ հայտնաբերմանը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին տարիներին ընկերության կողմից սպասարկվող ազգաբնակչության շրջանում մահացության վիճակագրությունը.

	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ. /9 ամիս/
Մահացածների թիվը	13	16	21	7
Այդ թվում՝ իգական սեռի	7	8	11	3

III. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

14. Պետության կողմից երաշխավորվող անվճար բժշկական օգնության և սպասարկման ծավալները կազմել են 2011թ.` 8054 , 2012թ.` 8236 , 2013թ.` 8519 , 2014թ. 9 ամիսներին` 6587.8 հազար դրամ:

Ցուցանիշ /անունը/	Նշանակությունը	Հաշվարկման բանաձևը	ցուցանիշ
1	2	3	4
Վճարունակության և իրացվելիության ցուցանիշներ			
Բացարձակ իրացվելիության գործակից	Ընթացիկ պարտավորությունների մարման հնարավորության աստիճան	դրամական միջոցներ կարճաժամկետ պարտավորություններ	1.02
Վճարունակության գործակից	Ընթացիկ պարտավորությունների արագ(ակնթարթային) մարման աստիճան	դրամական միջոցներ կարճաժամկետ պարտավորություններ	1.02
Ընթացիկ իրացվելիության ընդհանուր գործակից	Ընթացիկ ակտիվների կարճաժամկատ պարտավորություններին ծածկման աստիճան	դրամական միջոցներ ընթացիկ ակտիվներ կարճաժամկետ պարտավորություններ	1.83
Ֆինանսատևական անկախության գործակից	Սեփական կապիտալի մասը պասիվների մեջ	սեփական կապիտալ հաշվեկշիռ	0.26
Ակտիվների շահութաբերություն %	Ակտիվներում ներդրված յուրաքանչյուր դրամից ընկերության շահույթի ստացման չափ	ընկերության տրամադրության տակ մանացող շահույթx10 ակտիվների միջին մեծություն	15.6
Սեփական կապիտալի շահութաբերություն %	Ընկերության ներդրած միջոցներից ստացված շահույթի չափ	ընկերության տրամադրության տակ մանացող շահույթx100 սեփական կապիտալ	5.18
Շահույթ/ծախսեր գործակից	Ընկերության կատարած ծախսերի արդյունավետության Աստիճան	հաշվեկշռային շահույթ գործառնական ծախսեր	0.026

2014-2019թ.թ. նախատեսվում է բարձրացնել ընթացիկ իրացվելիության գործակիցը, ֆինանսատևական անկախության գործակիցը:

2013թ.-ին ընկերությունը չի ունեցել դեբիտորական և կրեդիտորական պարտքերի գծով ժամկետանց պարտավորություններ:

Առաջիկա տարիներին նախատեսվում է ֆինանսական կայունության ավելացում ծախսերի ավելի արդյունավետ կազմակերպման, հնարավորինս վճարովի ծառայությունների ներդրման միջոցով:

IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

15. Ընկերության գլխավոր հիմնախնդիրը շենքային անբավարար պայմաններն են. Ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման համակարգի բացակայությունը: Ջեռուցումն իրականացվում է Լլկերական էներգիայի միջոցով: Դեռևս 2009 թվականին առողջապահության ծրագրերի իրականացման գործակալություն ներկայացվել է նոր շենքի կառուցման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը: Քանի որ շենքի կառուցման համար անհրաժեշտ է մոտ 50 000 000 (հիսուն միլիոն) դրամ, հովանավորներ գտնելու փորձերն անարդյունավետ են:

Նոր շենքը հնարավորություն կտա լիարժեք օգտագործել առկա հնարավորությունները, բարձրացնել բժշկական օգնության և սպասարկման որակը, բարելավել ընկերության ֆինանսական վիճակը՝ վճարովի ծառայությունների ներդնումով:

Արգանդի պարանոցի բաղցկեղի կանխարգելման սկրինինգն ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով նախատեսվում է ոչ մեծ ծախսերով պայմաններ ստեղծել ՊԱՊ քսուկ վերցնելու ընկերության ներկայիս գործունեության տարածքում:

V. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Սույն զարգացման ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է սպասարկվող ազգարնակչության բժշկական օգնության և սպասարկման որակի բարձրացում , ընկերության շահութարևրության ապահովում: